Արձանագրություն 12

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/2» ծածկագրով երկու փուլով մրցույթ ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.09.2023թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Մ. Տեր-Հովհաննեսյան – ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Ա. Ղազարյան - ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Ա. Բալյան - ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

Ա. Սարգսյան – ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

Բացակայում էր՝

Հանձնաժողովի նախագահ

Ծ. Բարսեղյան

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. Հրավերով պահանջվել է, որ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող մեկ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի պետական կառավարման բնագավառում նշված ոլորտի վերապատրաստման ծառայությունների մատուցման առնվազն մեկ պայմանագիր: Մասնակիցը ներկայացրել է պայմանագիր, որը ներառում է ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժիններով նշված ոլորտների վերապատրաստման ծառայություններ, սակայն չի ներառում ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նշված ոլորտների վերապատրաստումներ:

2. Հրավերով պահանջվել է, որ մասնագետներն ունենան հրավերով սահմանված փորձառությամբ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ և դրա մասին տեղեկատվությունը ներկայացնեն հրավերում ներառված աղյուսակի տեսքով: Պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է, սակայն ըստ աղյուսակի՝ մասնագետներ Հարություն Թերզյանի ու Գայանե Հարությունյանի մասով չնայած որ աշխատանքային փորձի մասով ժամանակահատվածի սկիզբը նշված է համապատասխանաբար 2017թ. և 2004թ., չի երևում այդ ժամանակահատվածից առ

այսօր նրանք ծավալել են համապատասխան գործունեություն թե ոչ, իսկ եթե ծավալել են, ապա գործունեության ոլորտ, կատարած աշխատանք ու գործատուի անվանում նշված չէ: Փոխարենը նշված է միայն ՀՀՊԿԱ-ում աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխանաբար 2023թ.-ից և 2022թ.-ից առ այսօր, որով մասնագետները չեն ապահովում սահմանված փորձառությամբ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձի պահանջը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 14:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ. Տեր-Հովհաննեսյան

_____ Ա. Ղազարյան

_____ Ա. Բալյան

_____ Ա. Սարգսյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան